Գլխավոր տեղեկություն	
Համար	N 1021-L
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (25.06.2020-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Հրապարակվել է կայքում 24.06.2020
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	18.06.2020
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	22.06.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	25.06.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2020 թվականի N 1021-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1293-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2020 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1293-Լ որոշման՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման 2020 թվականի տարեկան ծրագրի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

2020 թ. հունիսի 22
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 1021-Լ որոշման

«Հավելված
Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման,
պահպանման, վերարտադրման,
բնականոն զարգացման և օգտագործման
2020 թվականի տարեկան ծրագրի

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

NN ը/կ	Ձկան տեսակը	Ձկնորսության թույլատրելի առավել քանակությունը (տոննա)	Ձկնորսության համար թույլատրելի քաշը միավորի համար (գրամ)	Ձվադրման ժամանակահատվածը
1.	Սիգ	200	500 գրամից ոչ պակաս	դեկտեմբեր-հունվար
2.	2020 թվականի համար Սևանա լճում կարաս և խեցգետին կենդանատեսակների համար արդյունագործական որսի չափաքանակ չի սահմանվել։			
	Ընդհանուր պահանջներ			
3.	Սիգ ձկնատեսակի որսն իրականացվում է Մեծ Սևանի ամբողջ տարածքով, ափից առնվազն 500 մ հեռավորության վրա։			
4.	Սիգի արդյունագործական որսն իրականացվում է դնովի ցանցերով (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ և ավելի)։			
5.	Արգելվում է որսն իրականացնել հանգուցային, արտադրված մեքենայական կամ ձեռքի միջոցով, սինթետիկ նեյլոնե կամ այլ պոլիամիդային մանրաթելերից, թելի տրամագիծը 0.5 մմ-ից պակաս և ցանցավանդակի չափը 80 մմ-ից պակաս (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ-ից պակաս) ձկնորսական ուռկաններով (ցանցեր)։			
6.	Արգելվում է Սևանա լճում արդյունագործական որսը սույն հավելվածի 1-ին կետերով չսահմանված կենդանատեսակների նկատմամբ։			
7.	Սևանա լճում կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի գործողության ժամկետ սահմանել 2020 թվականի մարտի 15-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հաշվի առնելով իշխան և սիգ ձկնատեսակների ձվադրման ժամանակահատվածը՝ ձկների բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով։			
8.	Արդյունագործական որս իրականացնելու նպատակով Սևանա լիճ լողամիջոցների մուտքն ու ելքը պետք է իրականացվեն ստորև նշված տեղամասերից (կից քարտեզ-սխեմա).			

Մուտքի կետի համար	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղեր	Մասնաճյուղի տեղամաս	Տեղադիրք	Աշխարհագրական կոորդինատներ	
ՓՈՔՐ ՍԵՎԱՆ					
1)	Արտանիշ	Դրախտիկ տեղամաս	Սևան-Ճամբարակ, մայրուղու 26 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 400 մ	40º32'33.03"C	45º12'32.13"B
2)	Սևան,	Ախթամարի տեղամաս	Սևան-Ճամբարակ, մայրուղու 14 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 55 մ	40º35'47.62"C	45º5'43.67"B
3)	Սևան	Ախթամարի տեղամաս	Սևան-Ճամբարակ, մայրուղու 1.1 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 1 կմ	40º36'13.39"C	44º58'14.56"B
4)	Սևան	Ախթամարի տեղամաս	Թերակղզու հյուսիսային ափ, մայրուղուց մինչև լիճ՝ 800 մ	40º34'056"C	45º0'29.42"B
5)	Սևան	Սևանի տեղամաս	Սևան-Վարդենիս, մայրուղու 10 կմ, մայրուղուց	40º30'47.75"C	45º1'43.74"B

			մինչև լիճ՝ 600 մ		
6)	Նորատուս	Այրիվանի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 21 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 450 մ	40º26'44.90"C	45º6'46.04"B
7)	Նորատուս	Նորատուսի տեղամաս	Նորատուսի հրվանդան, մայրուղուց մինչև լիճ՝ 10 կմ	40º25'52.38"C	45º12'58.08"B
			ՄԵԾ ՍԵՎԱՆ		
8)	Նորատուս	Նորատուսի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 38.1 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 500 մ	40º19'45.17"C	45º13'4.32"B
9)	Նորատուս	Նորատուսի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 47 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 2 կմ	40º14'53.32"C	45º13'14.10"B
10)	Մարտունի	Երանոսի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 52 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 2 կմ	40º12'46.89"C	45º14'4.18"B
11)	Վարդենիկ	Վարդենիկի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 61 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 2.5 կմ	40º10'17.19"C	45º17'4.04"B
12)	Վարդենիկ	Վարդենիկի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 69 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 1.0 կմ	40º9'10.20"C	45º22'30.12"B
13)	Վարդենիկ	Ծովինարի տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 80 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 50 մ	40º9'37.59"C	45º29'44.64"B
14)	Վարդենիս	Վարդենիս տեղամաս	Սևան-Վարդենիս մայրուղու 91 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 20 մ	40º11'29.75"C	45º37'20.86"B
15)	Վարդենիս	Արեգունի տեղամաս	Մայրուղու և գյուղի ճանապարհի	40º19'24.02"C	45º35'41.09"B

				խաչմերուկից դեպի լիճ՝ 1.8 կմ		
	16)	Արևիկ	Փամբակ տեղամաս	Մայրուղու և գյուղի ճանապարհի խաչմերուկից դեպի լիճ՝ 400 մ	40⁰22'2.55"C	45⁰31'56.85"B
	17)	Արտանիշ	Արտանիշի տեղամաս	Մայրուղու և գյուղի ճանապարհի խաչմերուկից դեպի լիճ՝ 300 մ	40⁰027'21.93"C	45⁰25'9.35"B
9.	Արգելվում է ձկների արդյունագործական որսն իրականացնելու նպատակով Սևանա լիճ մուտք և ելք գործել լողամիջոցների համար սահմանված մուտքի և ելքի տեղամասերից դուրս տարածքներից։					
10.	Սևանա լճում ձկների արդյունագործական որսն իրականացվում է օրվա լուսային ժամերին։					

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

Քարտեզ-սխեմա

»: